

5.4. 2011թ. ապրիլ ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2011թ. ապրիլին ունեցել է հետևյալ բնութագիրը.

Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Ապրիլին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Արարատ, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի և Հրազդան քաղաքներում տեղակայված 14 դիտակայանների, Երևան, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 149 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված ավտոմատ կայանների միջոցով:

Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 48226 փորձանմուշ:

Երևան քաղաքի հինգ դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 493 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.9 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 20496, ծծմբի երկօքսիդի համար՝ 11046, ազոտի օքսիդների համար՝ 1980, գետնամերձ օզոնի համար՝ 840 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ, ազոտի օքսիդինը՝ 1.2 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 19 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 123 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի մշտական դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ: Մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 188 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վանաձոր քաղաքի մշտական երեք դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի 157 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 94 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Հրազդան քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 78 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 7.8 անգամ, իսկ միանվագ առավելագույն

կոնցենտրացիան՝ 6.5 անգամ: Մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 2.0 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 96 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ալավերդի քաղաքի մշտական երկու դիտակայաններում, ինչպես նաև ավտոմատ կայանում, ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի 180 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4884, ծծմբի երկօքսիդի համար՝ 150, ազոտի օքսիդների համար՝ 25 դիտարկում: Քաղաքի պասիվ նմուշառման 18 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 108 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 29 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 3.2 անգամ: Մարտ ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:

Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 110 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 2028, ազոտի օքսիդների համար՝ 747, ծծմբի երկօքսիդի համար՝ 3984 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 12 և 10 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 128, 96 և 20 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում ավտոմատ եղանակով վերցվել է օդի 90 և փոշու 30 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորի, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև)
վերահսկվող նյութերի պարունակությունը, 2011թ. ապրիլ

(մգ/դմ³)

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը										
	04-05	06	11-12	12	17-18	18	20	21	22	23	26
Ջրածնային ցուցիչ (pH)	7.17	7.20	7.04	7.79	7.64	7.38	7.75	7.53	6.29	7.46	7.28
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՍիմ/սմ)	57.7	57.8	24.6	84.3	94.5	43.8	90.1	38.8	17.5	78.5	26.2
Սուլֆատ իոն	5.51	5.36	1.20	3.73	2.32	3.23	7.83	1.42	0.53	2.15	1.65
Քլորիդ իոն	0.69	0.67	0.13	0.30	0.18	0.54	0.81	0.25	0.14	0.33	0.29
Նիտրատ իոն	3.150	3.184	0.839	0.582	0.234	1.949	2.371	1.349	0.613	0.725	2.328
Ամոնիում իոն	0.991	0.943	0.225	0.273	0.307	0.335	0.608	0.588	0.444	0.444	0.485
Ընդհանուր ֆոսֆոր	0.256	0.254	0.026	0.178	0.023	0.029	0.351	0.098	-	-	-
Նատրիում	0.458	0.468	0.071	0.257	1.433	0.271	0.514	0.123	-	-	-
Կալիում	0.511	0.526	0.045	0.510	0.585	0.130	0.468	0.184	-	-	-
Մագնեզիում	0.325	0.348	0.177	1.556	1.841	0.356	0.618	0.429	-	-	-
Կալցիում	7.646	7.985	4.117	21.811	17.576	7.611	15.841	7.448	-	-	-
Երկաթ	0.071	0.066	0.069	0.531	0.288	0.197	0.313	0.278	-	-	-
Կապար	0.0002	0.0001	0.0005	0.0009	0.0002	0.0008	0.0009	0.0008	-	-	-
Կադմիում	0.0000	0.0000	0.0000	0.0001	0.0000	0.0000	0.0000	0.0000	-	-	-
Պղինձ	0.0016	0.0016	0.0001	0.0013	0.0019	0.0005	0.0021	0.0008	-	-	-
Ցինկ	0.0002	0.0002	0.0007	0.0042	0.0009	0.0014	0.0017	0.0017	-	-	-
Քրոմ	0.0003	0.0003	0.0003	0.0024	0.0013	0.0010	0.0017	0.0014	-	-	-
Արսեն	0.0002	0.0002	0.0001	0.0002	0.0012	0.0002	0.0003	0.0002	-	-	-
Նիկել	0.0006	0.0006	0.0003	0.0038	0.0013	0.0008	0.0016	0.0013	-	-	-

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Ապրիլին մակերևութային ջրերի նմուշատվել է հանրապետության 41 գետերի, Ապարանի, Արփիլճի, Ախուրյանի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 115 դիտակետերում: Վերցված 122 փորձանմուշներում որոշվել է 20-42-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2011թ. ապրիլ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները										
			ԹԿՊ ⁵ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	ԹԿՊ ⁶ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/դմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/դմ ³)	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)	ալյումին (ՍԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	քրոմ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	մանգան (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	բրոմ (ՍԹԿ՝ 0.2 մգ/դմ ³)
Փամբակ	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	-	-	1.862	-	-	-	-	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	0.664	183.4	-	-	-	-	-	-
Արաքս	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	-	0.059	-	-	-	-	-	-	-	-
Ախուրյան	34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	-	-	-	0.730	-	-	-	-	-	-	-
Կարկաչուն	38	Գետաբերան	-	-	0.146	1.142	-	-	-	-	-	-	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	3.5	-	0.031	0.515	-	0.206	0.009	0.003	-	0.002	-
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	4.3	-	0.036	-	-	0.209	0.009	0.003	0.023	0.002	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.041	-	-	0.197	0.010	0.004	0.028	0.002	-
Քասախ	47	Գետաբերան	4.3	-	-	-	-	-	-	-	-	-	
Գեղարոտ	49	Գետաբերան	-	-	0.042	-	-	-	-	-	-	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	4.0	-	-	-	-	0.286	0.004	0.002	0.026	0.003	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	4.7	-	-	-	-	0.220	0.006	0.002	0.019	0.003	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	4.1	-	0.028	2.373	-	0.184	0.014	0.008	0.033	0.002	0.396
	55	Դարբնիկ գյուղի մոտ	6.2	36	0.042	1.933	-	0.255	0.010	0.003	0.027	0.002	-
	56	Գետաբերան	5.0	-	0.044	1.494	-	0.176	0.014	0.004	0.025	0.002	-
Մարմարիկ	57	Հանքավան գյուղից 0.5 կմ վերև	3.5	-	-	-	-	0.150	-	-	-	0.008	-
	58	Գետաբերան	4.0	-	-	-	-	0.282	0.002	-	0.021	0.003	-
Գետառ	59	Գետաբերան	5.9	-	0.123	3.803	-	0.148	0.019	0.003	-	0.004	-
Մոթք	65	Գետաբերան	-	-	-	0.850	-	-	-	-	-	-	-
Արգիճի	73	Լեռնահովիտ գյուղից 0.5 կմ վերև	3.5	-	-	-	-	-	-	-	-	-	-
Շողվակ	76	Գետաբերան	-	40	-	-	-	-	-	-	-	-	-
Վեղի	80	Ուրցաձոր գյուղից 0.5 կմ վերև	-	40	-	-	-	-	-	-	-	-	-
Արփա	85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	3.9	-	-	-	-	-	-	-	-	-	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	3.5	-	-	-	-	-	-	-	-	-	-
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	-	34	-	-	-	-	-	-	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Զրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՄԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները											
			ԹԿՊ ₅ (ՄԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	ԹԿՊ (ՄԹԿ՝ 30.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՄԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	ամոնիում իոն (ՄԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	սուլֆատ իոն (ՄԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)	ալյումին (ՄԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	քրոմ (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	մանգան (ՄԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	բրոմ (ՄԹԿ՝ 0.2 մգ/դմ ³)	սելեն (ՄԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	80	-	-	-	-	-	-	-	-	-	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	40	-	-	-	-	-	-	-	-	-	-
Արծվանիկ	96	Գետաբերան	-	-	0.115	-	233.7	-	-	-	-	-	-	-
Որոտան	101	ք.Սիսիանից 1 կմ ներքև	-	-	0.034	-	-	-	-	-	-	-	-	-
	102	Տաթև ՀԷԿ գյուղից 0.5 կմ ներքև	-	56	-	-	-	-	-	-	-	-	-	-
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	-	0.284	4.780	-	-	-	-	-	-	-	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	-	-	0.029	-	-	0.389	0.009	0.003	0.023	0.002	-	-
Սևանա լիճ	125	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	3.7	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	126	Արվա-Սևան ջրատարի ելքի մոտ	3.3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	129	Երանոս գուղից 24 կմ 90° ազիմուտով, 20 մ խորքից	3.5	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	130	Նորատուս գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք	3.3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-